

ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ալիսա Գրիգորյան

Արդ՝ իրավունքի ամբիոնի դասախոս

Ժառանգական իրավունքը քաղաքացիական իրավունքի այն ինստիտուտներից է, որը հատուկ է ժամանակակից բոլոր իրավական համակարգերին, ինչը վկայում է հասարակական հարաբերություններում դրա կարևորության մասին: Ստեփանակերտ քաղաքում մեր կողմից կատարված վիճակագրական հարցումների համաձայն՝ 100 չափահաս բնակչից 78-ը այս կամ այն կերպ առնչվել է ժառանգման որևէ հարցի: Դա վկայում է այն մասին, որ ավելի մեծ թվով քաղաքացիներ օգտագործում են օրենքով իրենց տրված հնարավորությունը՝ ոչ միայն լուծելու իրենց սեփականության ճակատագիրը, այլև զերծ մնալու մտերիմների հետ հարաբերություններ պարզելուց, վեճերից, որոնք կարող են առաջանալ կտակարարի մահից հետո: Նման պայմաններում նոտարական մարմինների աշխատողների առաջ հաճախ անհրաժեշտություն է առաջանում քաղաքացիներին բացատրել իրենց ժառանգական իրավունքներն ու պարտականությունները: Որքան հստակ են կարգավորված այդ ոլորտում առաջացող իրավահարաբերությունները, նույնքան երաշխավորված է անձի իրավունքների պաշտպանությունը: Պետք է համաձայնել Ե. Սուխանովի այն կարծիքի հետ, որ «Այսօրվա իրականությունը ցույց է տալիս, որ հարազատներին ժառանգման միջոցով գույքի փոխանցման կամ դրա ստացման հնարավորությունը թույլ է տալիս քաղաքացուն հասարակության մեջ իրեն զգալ ավելի վստահ, քանի որ մարդն աշխատում է ոչ միայն իր, այլև՝ իր հարազատների համար՝ անհրաժեշտ նյութական կայուն վիճակ ապահովելու նպատակով, իսկ ժառանգման ինստիտուտը տալիս է նման հնարավորություն, քանի որ համարվում է սեփականության առաջացման հիմքերից մեկը»¹:

Ժառանգական գույքի օբյեկտների էական ընդլայնմանը զուգահեռ՝ ներկայումս առաջացել է ժառանգման իրավունքի իրավական կարգավորման և հստակեցման անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» (1998 թ.) ընդունմամբ ժառանգական իրավունքի զարգացումը թևակոխեց նոր ժամանակաշրջան, և անհրաժեշտություն առաջացավ նորովի կանոնակարգել սեփականության իրավունքով անձին պատկանող քաղաքացիական իրավունքի օբյեկտները ժառանգման եղանակով այլ անձանց փոխանցելու գործընթացը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով մի շարք նորամուծություններ և էական փոփոխություններ մտցվեցին ինչպես սեփականության իրավունքի, այնպես էլ ժառանգման իրավունքի ոլորտում:

Ինչպես մի շարք պետությունների, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետ ԼՂՀ) քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը համարվում է ժառանգման իրավունքը: 2017 թ. փետրվարի 20-ին ընդունվեց ԼՂՀ Սահմանադրությունը, որի 60-րդ հոդվածում ամրագրվե-

¹ Суханов. Е. А. Гражданское право. Том 2. М., 2008, էջ 58:

ցին սեփականության և ժառանգման իրավունքի վերաբերյալ մի շարք նորմեր: Ժառանգման իրավահարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվ ակտը ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքն է, որի 73-րդ գլուխը կարգավորում է ըստ կտակի ժառանգության դեպքում առաջացող իրավահարաբերությունները: Վերջինիս էությունն այն է, որ ԼՂՀ օրենսդրությամբ յուրաքանչյուր քաղաքացու համար օրենքով սահմանված է իրավունքների լայն շրջանակ, և քաղաքացուն հնարավորություն է տրվել մահվանից առաջ որոշելու գույքի ճակատագիրը, եթե նա համամիտ չէ ժառանգման այն կարգին, որը սահմանված է օրենքով: Այդ պարագայում քաղաքացուն օրենքով տրված է հնարավորություն՝ կատարելու գրավոր կարգադրություն, որն էլ կոչվում է կտակ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1201-րդ հոդվածի՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Կտակը կտակարարի կամքի փաստացի դրսևորումն է, որն անմիջականորեն կապված է նրա անձի հետ: Դրա համար էլ քաղաքացիական օրենսդրությունը չի թույլատրում կտակի կատարման հնարավորությունը ներկայացուցչի միջոցով (1201 հոդված, 4-րդ կետ): Իրավական տեսանկյունից կտակը սահմանվում է որպես միակողմանի գործարք (1201 հոդված, 7-րդ կետ), իսկ քաղաքացիական օրենսգիրքը երկու կամ ավելի անձանց կողմից կտակ անել չի թույլատրում: Կտակի՝ որպես գործարքի յուրահատկությունը այն է, որ այն ինքնաբերաբար իրավական հետևանք չի առաջացնում: Ինչպես կարելի է ենթադրել, ժառանգական իրավահարաբերություններն առաջանում են սոսկ իրավաբանական փաստերի համակցությունից, որոնցից է քաղաքացու մահը կամ էլ նրան մահացած հայտարարելը: Մահվան դեպքում գույքի տնօրինումն ակտ է, որը պահանջում է կտակարարի սոցիալական բավարար հասունություն, այսինքն՝ նրա գործունակ լինելը (<< քաղ. օր.-ի հոդված 1201, մաս 3-րդ):

Կտակի ազատությունը ևս կտակարարի կամքի դրսևորման կարևոր հատկանիշ է, ինչը ենթադրում է, որ քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ իրեն պատկանող ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել քաղաքացիական օրենսգրքի կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Քաղաքացին պարտավոր չէ որևէ մեկին տեղեկացնել կտակ անելու, այն փոփոխելու կամ վերացնելու մասին, կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով: Բացի այդ, կտակարարն իրավունք ունի կազմել ցանկացած՝ ներառյալ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ կարգադրություն պարունակող կտակ, ինչպես նաև առանց պատճառները բացատրելու՝ ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներից մեկին, մի քանիսին կամ բոլորին¹:

Կտակի ազատության սկզբունքի դրսևորման ձևերից է նաև մի քանի կտակներ կազմելու կտակարարի հնարավորությունը, որոնցից յուրաքանչյուրը կարող է ինչպես հակասել, այնպես և չհակասել նախկինում կազմվածին: Մի քանի կտակներում հակասությունների առկայության դեպքում վավեր է համարվում վերջինը, իսկ հակասությունների բացակայության դեպքում դրանք բոլորն էլ համարվում են իրավաբանորեն նշանակություն ունեցող և կիրառվում են ինքնուրույն:

¹ Կտակների թվի միջին տոկոսային հարաբերակցությունը 2010-2016 թթ. կտրվածքով ԼՂՀ-ում հետևյալ պատկերն է՝ հարազատների օգտին՝ 89%, ոչ հարազատների օգտին՝ 11%:

Նմանատիպ փաստ ի հայտ է գալիս կտակը բացելիս, երբ ժառանգությունը ընդունելու համար նոտարական գրասենյակ են դիմում միևնույն քաղաքացու կողմից կազմված տարբեր կտակներով ժառանգորդները՝ ներկայացնելով միևնույն ժառանգատուից իրենց հանձնված կտակը: Նման դեպքերում ժառանգությունը ըստ կտակի ձևակերպող նոտարը պարտավոր է ներկայացված կտակները մանրակրկիտ ուսումնասիրել և որևէ բովանդակային տարբերություն չհայտնաբերելու դեպքում ուշադրություն դարձնել կտակները կազմելու ժամանակի վրա: Եթե առկա է վերջին ամսաթվով կազմված կտակը, և օրենքով սահմանված վեց ամսվա ընթացքում որևէ նոր կտակ չի հայտնաբերվել, ապա, ըստ կտակի ժառանգման իրավունքի, վկայագիրը տրվում է վերջին ամսաթվով կտակ ներկայացնող ժառանգ(ներ)ին: Ներկայումս գործող կարգի համաձայն՝ կտակի փոփոխումը, վերացումը և լրացումը կատարում է կտակարարը՝ համապատասխան նոտարական գրասենյակի դիմում ներկայացնելու միջոցով, որտեղ նշվում է, թե նոր կտակ կազմելով՝ ինչ է ցանկանում ինքը: Եթե վերացնելով իր կողմից նախկինում կազմված կտակը՝ կտակարարը չի կազմում նոր կտակ, ապա դա կնշանակի, որ նախապատվությունը տրվում է ըստ օրենքի ժառանգմանը: Դրա համար էլ կտակը հաստատող նոտարական գրասենյակի աշխատողն իրավունք չունի պահանջել կտակում նշված գույքը կտակարարին պատկանելու մասին փաստաթուղթ («Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենքի 47 հոդված, կետ 3): Նոտարական պրակտիկայում հաճախակի են այն դեպքերը, երբ քաղաքացին, որևէ գույք կտակելու համար դիմելով նոտարին, սխալ է նշում կտակվող գույքի անվանումը (երբեմն զառանյալ հասակի կամ գրագետ չլինելու և այլ պատճառներով), և քանի որ նոտարը փաստաթուղթը ստուգելու նման լիազորություններ չունի, վավերացնում է կտակը: Իսկ երբ ժառանգության բացման պահին պարզվում է, որ կտակարարի հայտարարագրածը չի համապատասխանում փաստաթղթում նշված գույքի բուն անվանմանը, ապա գործարքը անվավեր պետք է համարվի՝ ելնելով օրենքում ամրագրված այն դրույթից, որ կտակը մեկնաբանելիս նոտարը պետք է առաջնորդվի դրանում տեղ գտած բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ (1219 հոդվ.): Ուստի կարծում ենք, որ նոտարին օրենքով պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու կտակարարի կողմից ներկայացվող փաստաթղթերի անվանմանը:

Խոսելով կտակի հասկացության և հատկանիշների մասին՝ հարկ է անդրադառնալ նաև դրա տեսակներին: Քաղաքացիական օրենսդրությունը առանձնացնում է կտակի երեք տեսակներ՝ *սովորական, պայմանով և զաղտնի*:

Սովորականի կտակի դեպքում կտակարարն առանց որևէ պայմանի, գործարքների հաստատման վերաբերյալ կանոնների պահպանմամբ դիմում է նոտարական գրասենյակ, որտեղ ձևակերպում է կտակը: Տվյալ դեպքում կտակարարն անձամբ գրի է առնում իր կարգադրությունը, և նոտարը վավերացնում է այն՝ կազմելով մեկ փաստաթուղթ: Բաց կտակ կազմելիս կտակարարն ազատորեն շարադրում է իր կամքը՝ պահպանելով օրենքով սահմանված կտակի այդ տեսակին վերաբերող նորմերը: Այս մանրամասներն ամրագրված են քաղ. օր.-ի 1214 հոդվածով:

Պայմանով կտակի իրավական կարգավորումը սահմանված է քաղ. օրենսգրքի 1206-րդ հոդվածով, համաձայն որի՝ կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով: Ժառանգ նշանակելու կամ ժառանգության իրավունքից զրկելու վերաբերյալ կարգադրությունում ներառված ապօրինի պայմաններն

անվավեր են: Կտակում տեղ գտած պայմանը, որը ժառանգը չի կարող կատարել իր առողջական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառների ուժով, կարող է անվավեր ճանաչվել ժառանգի հայցով: Այս դեպքում կտակարարի կամքը մնում է անկատար: Այսինքն, երբ ժառանգը հրաժարվում է կատարել կտակում նշված պայմանը, ապա նա չի ստանձնում ըստ կտակի ժառանգման համար օրենքով նախատեսված իրավունքները: Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ պայմանով կազմված կտակի կտակարարի իրավասությունների վերաբերյալ իրարամերժ կարծիքներ են հայտնվում: Մի մասը (Մ.Բարշչևսկի, Ն.Կամինսկայա) գտնում են, որ պայմանով կտակները ինքնին չեն հակասում օրենքին և լիարժեք իրավաչափ են: Նրանց կարծիքով, ձևակերպելով կտակի պայմանը, անձը առաջնորդվում է կտակը տնօրինելու օրենքով սահմանված ազատության սկզբունքից, և այդ պայմանները կարող են լինել տարբեր՝ ինչպես կապված, այնպես էլ չկապված ժառանգորդի անձի հետ¹: Մյուս մասի կարծիքով (Վ.Գուշչին, Յու. Դմիտրիև), ինչ էլ որ լինի՝ կտակը չպետք է կապված լինի «հանդիպական» պայմանի հետ²: Հարկ ենք համարում ընդգծել, որ ՌԴ քաղաքացիական օրենսդրությամբ պայմանով կտակն օրենսդրորեն ամրագրում չի ստացել: Ի տարբերություն ՌԴ քաղաքացիական օրենսդրության ԼԴՀ քաղ. օրենսգրքի 1206 հոդվածում ամրագրված է պայմանով կտակ հասկացությունը, որում ժառանգություն ստանալու հնարավորությունն օրենսդիրը կապում է մի շարք պայմանների հետ, ինչն իրավակիրառ տեսանկյունից առաջացնում է դժվարություններ թերևս այն պատճառով, որ սահմանված չէ պայմանով կտակը ընդունելու կամ չընդունելու ընթացակարգ: Մեր կարծիքով, ժառանգական իրավահարաբերություններում բավականին խնդրահարույց են սահմանել ժառանգատուի կամաարտահայտության ազատության սահմանը և օրենքով թույլատրվող դրա սահմանափակման չափը: Դա առանձնապես վերաբերում է տարբեր պայմաններին, որոնցով կտակարարը ցանկանում է ժառանգության ընդունումը կապել հետագայում կատարվելիք որոշակի պայմանի հետ, դրա համար էլ փորձում է դրանք ընդգրկել կտակի մեջ: Իրականում կտակարարի պայմանը կատարելու իրավական մեխանիզմի բացակայությունը հանգեցնում է նրան, որ՝

ա) կոնկրետ ժառանգատուին գույքի փոխանցման պահը, որպես կանոն, ձգձգվում է անորոշ ժամանակով,

բ) մինչ ժառանգատուի կողմից ժառանգությունը պայմանով ընդունելու պահը պարզ չէ, թե ինչպիսին պետք է լինի գույքի իրավաբանական ձևատափիրը,

գ) ժառանգական իրավահարաբերությունները տրամաբանական ավարտ չեն ստանում իրավահաջորդների կազմում որոշակիության բացակայության պատճառով:

Նման հետևանքները մի կողմից արգելում են ժառանգորդներին իրենց քաղաքացիական իրավունքները իրականացնելու, մյուս կողմից նվազեցնում են այլ շահագրգիռ անձանց իրավունքները և շահերը: Ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար, կարծում ենք, ավելի ընդունելի կլինի գործածությունից հանել պայմանով կտակ հասկացությունը:

Փակ կտակը օրենսգրքով ամրագրելը նորություն է ինչպես ԼԴՀ, այնպես էլ ՀՀ օրենսդրության համար, և սրա հիմնական առանձնահատկությունը այն է, որ, ի

¹ St'u **Каминская Н.Л.** Правовые проблемы наследования по завещанию в Российской Федерации. Дисс...канд. юрид. наук. М. 2007, էջ 54, **Барщевский. М. Ю.** Правовое регулирование наследования по завещанию в СССР, Дисс...канд. юрид. наук. М., 1984, էջ 105:

² St'u **Гуцин В.В., Дмитриева Ю.А.** Наследственное право и процесс. М., Эксмо. 2005, էջ112:

տարբերություն սովորական կտակի, որի բովանդակությունը կարող է հասանելի լինել նաև նոտարին, կտակարարի ցանկությամբ նոտարը կտակը վավերացնում է առանց դրա բովանդակությանը ծանոթանալու: Եթե քաղ. օրենսգրքի 1214-րդ հոդվածը նախատեսում է կտակը նոտարի կողմից գրի առնելու հնարավորություն, ապա փակ կտակի դեպքում այն պետք է գրի և ստորագրի անձամբ կտակարարը: Փակ կտակը բացվում է կտակարարի մահից հետո, երբ շահագրգիռ անձը նոտարին է ներկայացնում կտակարարի մահվան վկայականը, որից հետո նոտարը բացում է փակ ծրարով կտակը: Մեր կարծիքով, անհրաժեշտ է քաղ. օրենսգրքում ամրագրել այն դրույթը, որ փակ կտակի ծրարի բացման ժամանակ նույնպես պետք է մասնակցեն երկու վկաներ, որոնք կարող են լինել ինչպես կտակը կտակարարի կենդանության օրոք ստորագրող վկաները, այնպես էլ ցանկացած այլ անձինք, որոնք տիրապետում են հայերենին, գործունակ են և բավարարում են «Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենքի 38 հոդվածում նշված պահանջները:

Պարզ է, որ եթե ժառանգումը կատարվում է ըստ կտակի, ապա դրանով արտահայտվում է կտակարարի կամքն իր մահից հետո իրեն պատկանող գույքը տնօրինելու մասին, և կտակարարը, քաղ. օրենսգրքի 1202-րդ հոդվածին համապատասխան, կարող է կտակում նշել իր ցանկացած ժառանգների շրջանակը: Ընդհանուր առմամբ, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը քաղաքացիական իրավունքի ավանդական ինստիտուտներից մեկն է, որն ունի սոցիալ-տնտեսական և բարոյական նշանակություն: Սրա էությունը այն է, որ օրենքի ուղղակի ամրագրման ուժով, անկախ կտակի բովանդակությունից, համապատասխան անձինք իրենց ամուսնու (ծնողի, երեխայի) մահվան դեպքում իրավունք են ստանում ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրանց կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Տեսական գրականության մեջ ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի սահմանման վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Այսպես, Ռ. Ի Վինոգրադովի, Գ. Կ. Դմիտրիևայի, Վ. Ս. Ռեպինի կարծիքով, պարտադիր բաժինը ժառանգության զանգվածի այն մասն է, որը, անկախ այն բանից, թե ինչ է նախատեսված կտակում, պետք է անցնի համապատասխան ժառանգին¹:

Վ. Վ. Գուլչինը և Յու. Ա. Դմիտրիևն այն կարծիքին են, որ պարտադիր բաժինը ժառանգության այն հատվածն է, որով ամրապնդվում է այն անձանց ժառանգման իրավունքը, ովքեր ժառանգներ են համարվում՝ անկախ կտակի բովանդակությունից²:

Առավել հոգեհարազատ է Օ. Ս. Իօֆֆեի՝ պարտադիր բաժնի իրավունքի հասկացության վերաբերյալ դիրքորոշումը: Ըստ նրա՝ պարտադիր բաժնի իրավունքը ենթադրում է նվազագույն պայմանների երաշխավորում անհրաժեշտ ժառանգների համար³:

Այս տեսանկյունից ՌԴ քաղ. օր.-ի 1149-րդ հոդվածը որպես պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներ սահմանում է ժառանգատուի անչափահաս և անգործունակ երեխաներին, անգործունակ ամուսնուն և ծնողներին, ժառանգատուի խնամքին եղած անձանց: Օրենքում նման ամրագրումը նախ և առաջ

¹ Տե՛ս **Виноградова Р. И., Дмитриева Г.К., Репин В.С.**, Комментарий к ГК РФ, под ред. В. П. Мозолина М., НОРМА, 2002, էջ 90:

² Տե՛ս **Гущин В.В., Дмитриева Ю. А.** Наследственное право и процесс. М., 2005, էջ 112:

³ Տե՛ս **Иоффе О.С.** Советское гражданское право, Курс лекций (Правоотношения, связанные с продуктами творческой деятельности. Семейное право. Наследственное право). Ленинград, 1965, էջ 317:

ենթադրում է այդ անձանց ժառանգության իրավունքի ճանաչում, ինչը նպատակ ունի ապահովելու կտակարարից կախյալ անձանց նվազագույն կենսամակարդակը վերջինիս մահից հետո: Ընդ որում, պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների նման շրջանակը ՌԴ քաղ. օրենսգրքի համար նորություն է, և իմաստն այն է, որ հատկապես սոցիալապես առավել խոցելի անձինք շատ չտուժեն:

Եվրոպական մի շարք երկրներում պատկերն այլ է: Այսպես Գերմանիայում պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձը ոչ թե ըստ օրենքի ժառանգ է, այլ հանդես է գալիս որպես պարտատեր ըստ կտակի ժառանգների նկատմամբ և իրավասու է պահանջել նրանցից համապատասխան պարտավորության կատարում: Անգլիայի քաղաքացիական օրենսդրությունը չի ճանաչում «պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգներ հասկացությունը», այլ միայն նախատեսում է ժառանգատուի ամուսնու, անչափահաս և անգործունակ երեխաների համար հնարավորություն՝ դատական կարգով պահանջելու ողջամիտ հատուցում ժառանգության զանգվածից, եթե դա ապահովված չի եղել կտակի միջոցով¹:

Ժառանգության պարտադիր բաժնի իրավունքն ամրագրված է նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով, որի վերաբերյալ իրավահարաբերությունները հիմնականում կարգավորվում է 1203 հոդվածով, իսկ 1240-րդ հոդվածը հոգուտ այլ անձի ժառանգության պարտադիր բաժնից հրաժարվելու անթույլատրելիության մասին է: Իսկ 1203 հոդվածը նախատեսում է պարտադիր բաժնի իրավունքի հասկացությունը և դրա իրավունքն ունեցող ժառանգների շրջանակը: Դրանք են՝ ժառանգատուի անչափահաս երեխաները, չափահաս հաշմանդամ երեխաները, անգործունակ ճանաչված երեխաները, 60 տարեկան դարձած երեխաները, 60 տարեկան դարձած ամուսինը, 60 տարեկան դարձած ծնողները: Ի դեպ, 1964 թ. Հայկական ԽՍՀ օրենսդրությամբ պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց շրջանակը ավելի նեղ էր. այտեղ ներառված էին ժառանգատուի անչափահաս կամ անաշխատունակ զավակները (այդ թվում՝ որդեգրվածները), ինչպես նաև մահացածի անաշխատունակ ամուսինը, ծնողները (որդեգրողները) և խնամքի տակ գտնվողները: Նման դիրքորոշումն առավել ճիշտ է, քանի որ եթե առանց վերոնշյալ անձանց ընդգրկելու է կազմվում կտակ, ապա պարտադիր բաժնի իրավունքի ինստիտուտն ապահովում է նրանց հետագա նյութական վիճակի կայունությունն ու ապրելու համար նվազագույն կենսամակարդակը, այնինչ՝ 60 տարեկան դարձած երեխան, ամուսինը, ծնողը կարող են հոգալ իրենց ապրուստի նվազագույն միջոցները, իսկ անգործունակ կամ հաշմանդամ լինելու դեպքում տրամաբանական է, որ կընդգրկվեն պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց շրջանակում: Բացի այդ, տարբեր երկրների քաղաքացիական օրենսդրությամբ ժառանգման պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց շրջանակի մասով որոշ երկրների օրենսդրությունը 60 տարեկան դարձած երեխայի, ամուսնու, ծնողի վերաբերյալ դրույթներ չի պարունակում (օրինակ՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլն): Ուստի առաջարկվում է ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց շրջանակում ընդգրկել միայն ժառանգատուի անչափահաս երեխաներին, չափահաս հաշմանդամ երեխաներին, իսկ 60 տարեկան դարձած երեխայի, ամուսնու, ծնողի վերաբերյալ դրույթները հանել քաղաքացիական օրենսդրությունից:

Բնական է, որ ժառանգման վերաբերյալ պրակտիկայում առաջացող խնդիրները բազմաթիվ են, սակայն ինչպես ցույց է տալիս պրակտիկան, դրանց մեծ մասը

¹ Տե՛ս **Жаботинский М.В.** Обязательная доля при наследовании имущества: российский и зарубежный опыт //Бюл. Нотариал. Практики, М., Юрист, 2006, էջ 20-21:

կապված է ժառանգության ընդունման ժամկետների հետ: Նշված ոլորտից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են քաղ. օրենսգրքի 1237-րդ հոդվածով, որը նախատեսում է սահմանված ժամկետի ավարտից հետո ժառանգության ընդունման տարբերակները: Քաղ. օրենսգիրքը նախատեսում է սահմանված 6-ամսյա ժամկետի ավարտից հետո ժառանգությունն ընդունելու 2 տարբերակ՝ արտադատական և դատական:

Առաջին դեպքում ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Տվյալ դեպքում անձը դիմում է նոտարին՝ ժառանգությունն ընդունած մյուս ժառանգների համաձայնություն պարունակող փաստաթղթերի հիման վրա: Ժառանգների ստորագրությունները հիմք են նոտարի կողմից նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար:

Երկրորդ դեպքում, եթե բացակայում է նախկինում ժառանգությունն ընդունած ժառանգների համաձայնությունը, ժառանգը դատարան է ներկայացնում դիմում՝ ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու պահանջով: Հետագայում պարզելով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, ժամկետը բաց թողած ժառանգը դիմել է դատարան, և որ նշված ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և չէր կարող իմանալ ժառանգության բացման մասին, դատարանը նրան կարող է ճանաչել ժառանգությունը ընդունած ժառանգ:

Թվում է, թե օրենսդիրը նախատեսել է սահմանված ժամկետի ավարտից հետո ժառանգության ընդունման հնարավոր տարբերակներ հօգուտ հնարավոր ժառանգների, սակայն պետք է ընդգծել, որ գործնականում նշված ոլորտի խնդիրները դեռ առկա են և լրացուցիչ կարգավորում են պահանջում: Նման վիճակի առաջացման հիմնական պատճառն այն է, որ չկա հստակ կառուցակարգ, որը կսահմանի ժառանգության ընդունման սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու ապացուցման տարբերակներ: Դիտարկենք այսպիսի մի դեպք. ժառանգը գիտեր ժառանգության ընդունման սահմանված ժամկետի մասին (ժառանգությունը բացվել է մարտի 1-ին, իսկ 6 ամիսը կլրանա օգոստոսի 1-ին), սակայն աշխատանքի բերումով մեկնում է արտերկիր՝ մտածելով, որ գալուց հետո կգրավի այդ հարցերով: Սակայն հետդարձի ճանապարհին դառնում է դժբախտ պատահարի մասնակից և ընկնում է կոմայի մեջ: Նման պարագայում արդյոք դա կհամարվի՞ հարգելի պատճառ ժառանգության ընդունման սահմանված ժամկետը բաց թողնելու համար, եթե օրենսդիրը նշում է, որ «ժառանգը չպետք է իմանար կամ պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին»: Անկասկած նման օրինակները բազմաթիվ են, իսկ օրենքը չի մատնանշում ժառանգության ընդունման ժամկետը վերականգնելու համար բավարար հիմքերի շրջանակը, և դա որոշում է դատարանը՝ ելնելով տվյալ գործի բնույթից: Այս կապակցությամբ առաջարկում ենք քաղ. օրենսգրքի 1237-րդ հոդվածի 2-րդ մասի «ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին» արտահայտությանն ավելացնել նաև «կամ հարգելի համարվող այլ պատճառներից ելնելով» բառակապակցությունը, քանի որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ժառանգն իմանա ժառանգության ընդունման սահմանված ժամկետի մասին, սակայն օբյեկտիվորեն գրկված լինի դրա համար անհրաժեշտ գործողություններ կատարելու հնարավորությունից:

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ НАСЛЕДОВАНИЯ ПО ЗАВЕЩАНИЮ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

Алиса Григорян

Преподаватель кафедры прав АргУ

В статье раскрыты различные теоретические и практические аспекты правового регулирования правоотношений, возникающих при наследовании по завещанию. На основе анализа действующего законодательства рассматриваются особенности наследования по завещанию. Для освещения проблемы в данной работе проанализированы существующий в теории и на практике круг дискуссионных вопросов, касающийся формы проявления принципа свобода завещания, характеристики отдельных видов завещаний, обязательной доли в наследстве, сроков принятия наследства. На основе сравнительно-правового анализа и учитывая опыт других стран, автором предлагается ввести в действующее законодательство ряд изменений и дополнений.

LEGAL PROBLEMS OF INHERITANCE BY WILL IN THE NAGORNO-KARABAKH REPUBLIC

Alisa Grigoryan

Lecturer at the ArSU Department of Law

The current article discloses various theoretical and practical aspects of the legal regulation of legal relations arising from inheritance by will. Based on the analysis of the current legislation, the peculiarities of inheritance by will are observed. For covering the problem, a wide range of discussion questions existing in theory and practice and concerning the form of manifestation of the principle of will freedom, the characterization of certain types of wills, the mandatory share in the inheritance, and the timing of the acceptance of the inheritance are analyzed in this work. Based on the comparative-legal analysis and considering the experience of other countries, the author suggests introducing a range of changes and additions into the current legislation.

Բանալի բառեր - ժառանգում, կտակ, կտակարար, ժառանգորդներ, կտակի ազատություն, ւարժարարի բաժին, տեսակներ, ժամկետներ, նոտարական վավերացում

Ключевые слова: наследование, завещание, наследодатель, наследники, свобода завещания, обязательная доля, виды сроки, нотариальное удостоверение

Key words: inheritance, will, testator, heirs, freedom of will, mandatory share, types, terms, notari certification